

ՊԸՐՐԻ - ՆԱՍՐԱԼԼԱ ԺՈՂՈՎ ԱՅՆԵԼԹԻՆԵԻ ՄԷՁ

Ամալի եւ Հրպայալայի ղեկավարութիւնները երէկ Այնէլթինէի մէջ գումարեցին ժողով մը, որուն ներկայ գտնուեցան Ամալի ղեկավար՝ խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի եւ երեսփոխաններ Այուպ Հըմայէտ եւ Ալի Հասան Խալիլ, իսկ Հրպայալային՝ ընդհանուր քարտուղար շէյխ Հասան Նասրալլա եւ անոր քաղաքական հարցերու խորհրդականը՝ Հուսէյն Խալիլ, ինչպէս նաեւ երեսփոխան Մոհամէտ Ռասաւ:

Կողմերը քննարկեցին պաղեստինեան ինքիֆատային եւ արաբական վեհաժողովին վերաբերող հարցեր, ինչպէս նաեւ երկրին ներքին իրավիճակը եւ նոր կառավարութեան կազմութեան նախօրեակին տիրող մթնոլորտը:

Ժողովականները հաստատեցին, որ պիտի շարունակեն իրենց գործակցութիւնը յատկապէս ապստամբութեան եւ իրաւագործ շրջաններու բարգաւաճման համար:

ԳԱՆՏՐԵԻ ՎԵՆԱԺՈՂՈՎԻՆ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԻՐ ԾԱՌՈՒՆ ՄԷՁ

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՇԵՇՏԸ ԴՐԱԻ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Հանրապետութեան նախագահ Վոր. Էմիլ Լահուտ երէկ վերադարձաւ Գահիրէէն, ուր մասնակցած էր արաբական արտակարգ վեհաժողովին, գլխավորելով իբրանանեան պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին վարչապետ Սեյիմ Հըս, նախարարներ Բարամ Բարամ, Ժորժ Գըրմ, ընդհանուր ապահովութեան ընդհանուր տնօրէն Վոր. Ժեմիլ Սեյիտ, Եգիպտոսի մէջ Լիբանանի դեսպան Հիշամ Տիմաշքիէ եւ արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Չուհէր Համտան:

Շարք օր վեհաժողովի բացման նիստին արտասանած իր խօսքին մէջ, նախագահը նկատել տուաւ, որ Լիբանան շատ տառապած է սուղ գին վճարած է. բայց երբ անոր ժողովուրդը միացաւ, կրցաւ մեծ իրագործումներ կատարել, իր հողը ապստամբել: «Համոզուած եմ, որ երբ արաբական պետութիւններն այլ միասնա՛ն ապստամբելու արարական բռնագրաւեալ հողերը եւ ապահովելու պաղեստինցի գաղթականներու տունդարձը, կը յաջողին. ուրեմն հիմնականը մեր միասնականութիւնն է», ըսաւ ան:

Նախագահ Լահուտ ըսաւ, որ այս կեցուածքը յաջողած է Լիբանանի մէջ եւ նոյն դրական արդիւնքը կրնայ տալ արաբական հիմաստով. «Մենք գիտենք եւ սորվեցանք այս ձեւը, որովհետեւ 20 տարի շարունակ այս վիճակին մէջն էինք: Մենք կը պահանջէինք ժողովուրդին տառապանքը. նաեւ գիտենք, որ եթէ մենք՝ արաբ ղեկավարներս պատասխանատուութեան մակարդակին չբարձրանանք, ապա մեր ժողովուրդները պիտի լքեն մեզ: Հետեւաբար պէտք է մէկ եւ վճռական կեցուածք որդեգրենք. Պաղեստինի առնչութեամբ, որովհետեւ այս արարքը կարելի չէ լուծել առանց յանդուգն որոշումներու. անկէ ետք միայն կրնանք մեր ժողովուրդներուն ըսել, թէ մենք կ'առաջնորդենք պիտի լքենք դէպի ապստամբութեան, կ'ապստամբուինք անկախութիւն եւ անբողջական խաղաղութիւն»:

Շար.՝ էջ 2

ԱՅՆ ՊԱՀՈՒՆ ԵՐՐ ԿԱԶՁՅԻ ԵՒ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՁ ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ԿՐ ԾԱՌՈՒՆԱԿՈՒԹԻՆ ԻՍՐԱԷԼԱՅԻՆՆԵՐՈՒՆ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆՅՈՒՆՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ

ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՎԱԺՈՂՈՎԸ ԱՄԱՐՏԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՒ ԸՐԱՊԱՐԱԿԵՑ ԶԳՈՒՇԱԻՈՐ ԸԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Արաբ ղեկավարները Եգիպտոսի մայրաքաղաք Գահիրէի մէջ երէկ փակեցին երկօրեայ վեհաժողովը, իսկու ռճով դատապարտելով «բարբարոս» Իսրայէլը, ինչպէս նաեւ վերահաստատելով իրենց պահանջները: Մակայն արաբական դատապարտումը մնաց խօսքի սահմանէն ներս, որովհետեւ անոր կողքին չտրուեցաւ Իսրայէլի դէմ խիստ պատժամիջոցներ որդեգրելու որոշում մը:

Երկօրեայ վեհաժողովին աւարտին հրապարակուած հաղորդագրութիւնը կը պահանջէ, որ ՄԱԿ պատերազմի ռճիրները



Եգիպտոսի Գահիրէի Հիւսիս Մուսարաբ կը կատարէ վեհաժողովին բացումը:

կար ցուցարարներու Իսրայէլի հետ կապերը խզելու պահանջին: Հաղորդագրութիւնը կը նշէր միայն, որ արաբական երկիրները պիտի սանձեցնեն Իսրայէլի հետ կապերու բնականոնացումը եւ պիտի չմասնակցին շրջանային տնտեսա-

թիւնը կ'աւելցնէ, որ խաղաղութիւնը պիտի չիրականանայ մինչեւ որ Իսրայէլ արաբներուն վերադարձնէ 1967ին գրաւած բոլոր հողերը, որոնց կարգին է Արեւելեան Երուսաղէմը, որ պաղեստինեան պետութեան մը մայրաքաղաքը կը նկատուի:



Սուրիոյ Գահիրէի Պաշտար Ասատ Խօսքի պահուն:

րու առեանի մը միջոցով դատէ պաղեստինցիները շարդող Իսրայէլացիները: Հաղորդագրութիւնը կը պահանջէ նաեւ հաստատումը արաբական երկու ֆոնտերու, որոնք մէկ միլիարտ տոլար պիտի տրամադրեն պաղեստինցիներուն եւ Արեւելեան Երուսաղէմին: Ինքիֆատային ֆոնտը երկու հարիւր միլիոն տոլար պիտի ապահովէ անցնող երեք շաբթուան մէջ սպաննուած կամ վիրատուրուած պաղեստինցիներուն ընտանիքներուն: Երկրորդը, որ պիտի կոչուի Աքսա ֆոնտ, ութ հարիւր միլիոն տոլար պիտի ապահովէ արաբները Արեւելեան Երուսաղէմի «արաբական եւ իսլամական դիմագիծը» պահպանելու եւ պաշտպանելու համար:

կան գործակցութեան համար կայանալիք բազմակողմանի բանակցութիւններուն, ներքին չմատնելու համար Եգիպտոսն ու Յորդանանը. որոնք Իսրայէլի հետ խաղաղութեան համաձայնագիրներ ստորագրած են: Հաղորդագրութիւնը կը յայտնէ նաեւ, որ խաղաղութեան գործընթացին ներկայ իրավիճակին պատճառով, արաբական աշխարհը դէմ պիտի դնէ Իսրայէլեան որեւէ փորձի, որուն նպատակն է նոր կապեր հաստատել արաբական երկրի մը հետ:

Հաղորդագրութիւնը վերստին կը հաստատէ, որ արաբները յանձնառու են Իսրայէլի հետ արդար եւ անբողջական խաղաղութիւն մը հաստատելու, պայմանով, որ հրէական պետութիւնն այնչէս ձեւի յանձնառութիւն յայտնէ:

Շար.՝ էջ 2

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՆԱՇԵՒՆ ԳԾՈՎ

ԹՈՒՐԲԻԱ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՊԻԼ ԲԼԻՆԹԸՆԻՆ

Թուրքիոյ նախագահ Սեմսէթ Նեմետք Սեպեր Շարք օր շնորհակալական նամակ մը յղեց Միացեալ Նահանգներու նախագահ Պիլ Բիլինթոնին՝ Ներկայացուցիչներու Տան ժողովին օրակարգէն Հայկական Յեղասպանութեան բանաձեւը դուրս բերելուն առիթով:

Թուրք ժողովուրդին անունով, նախագահ Բիլինթոնին եւ ամերիկեան վարչակազմին շնորհակալութիւն յայտնելով Սեպեր կը նշէ. «Դուք միշտ յատուկ տեղ պիտի գրաւէք թուրք ժողովուրդին սիրտերուն մէջ, իբրեւ Թուրքիոյ իրական եւ առաջնակարգ բարեկամ. ձեր ցուցաբերած արժեքաւոր նպատակն շնորհիւ յետս կոչուեցաւ այն բանաձեւը, որ կրնար վնաս պատճառել երկու երկիրներուն միջեւ լաւ յարաբերութիւններուն»:

Իր կարգին, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իմալիլ Ճէմ ռոշունեց Ներկայացուցիչներու Տան օրակարգէն Յեղասպանութեան բանաձեւը դուրս բերելու մասին որոշումը:

Թուրքիոյ դիւանագիտութեան պետը նշեց, որ բանաձեւին շնորհը արդիւնք էր Մ. Նահանգներու երկարատեւ եւ հաւաքական շահերու յաղթանակին՝ քննկրէսականներու անձնական եւ կուսակցական շահերուն դէմ: Ան նշեց, որ Թուրքիա Իրաքի պարագան չէ օգտագործած այս հարցին ուղղութեամբ եւ թուրք-իրաքեան յարաբերութիւնները ամրոցութեամբ անկախ են Հայկական Հարցէն:

Ճէմ ըսաւ, որ չափապանցութիւն պիտի ըլլայ եթէ ասիկա կոչենք Թուրքիոյ դիւանագիտական յաղթանակը: Միացեալ Նահանգներու վարչակազմը շատ լաւ գնահատում կատարեց համաշխարհային հաւասարակշռութեան մէջ Թուրքիոյ արժեքին եւ դիրքին: Ան նշեց, որ Հայկական Հարցի արժարժումը կ'առնչուի բնորոշութիւններուն: «Յեղասպանութեան հարցը պիտի արժար:

Շար.՝ էջ 10

ՄԱԿԻ ՄԷԿ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ ԸՄՍԱԶԱՅՆ

ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՁ ԽՈՉՆԵՂՈՏՆԵՐ ԿԱՆ ՈՉ ԻՍԼԱՄ ՓՈՔՐԱՍԱՍՆՈՒԹԵԱՆՑ ԴԵՍ

ՄԱԿի կողմէ անցեալ շաբթոյ հրապարակուած տեղեկագրի մը համաձայն, Թուրքիա պետք է կառչած մնայ իր օրէնքին, որպէսզի պաշտպանէ կրօնական փոքրամասնութիւնները եւ յաւելեալ ճիգ պետք է թափէ պայքարելու համար անհանդուրժողականութեան դէմ:

30 էջերէ բաղկացած տեղեկագիրը պատրաստած է Մարդկային Իրաւանց յանձնախումբին յատուկ վեկուցաբերը՝ Ապտէլֆաթիմ Ամոր, որ 30 Նոյեմբերէն 9 Դեկտեմբեր 1999ին Թուրքիա այցելած է:

Ամորի համաձայն, Թուրքիոյ 25 հազար հրեաներուն ղեկավարները միաձայնութեամբ շեշտած են, որ «իրենց համայնքին իրավիճակը ընդհանուր առմամբ գոհացուցիչ է»: Սակայն Ամոր կը նշէ, որ յոյն եւ հայ քրիստոնեաներուն բոլորովին հակառակ վիճակը պարզող հրեաները ոչ մէկ պահանջք ունին Թուրքիային: Ան նկատել կու տայ, որ Իսրայէլ եւ Թուրքիա մտակ յարաբերութիւններ ունին: Հայ պատրիարքին խօսքերը մէջբերելով, Ամոր կ'ըսէ, որ անոր հետեւորդները, որոնք կը գնահատուին 60 հազարէն 93 հազարի միջեւ, ապա պաշտամունքի իրաւունք ունին, սակայն պատրիարքը իրական կարգավիճակ չունի: Թուրքիոյ 2,5 հազարէն 4 հազար յոյն ուղղափառներու պատրիարքը եւս չի կրնար հեղինակութիւն ունենալ: Ամոր կ'ըսէ, որ յոյն ուղղափառ եւ ասորի փոքրամասնութիւնները դանդաղօրէն կը նսեմանան:

Ամոր կը նշէ, որ հակառակ այն իրողութեան, թէ Թուրքիոյ սահմանադրութիւնը կ'երաշխաւորէ կրօնական ապստամբութիւնը, խոչընդոտներ կան ոչ իսլամ փոքրամասնութեանց դէմ՝ դպրոցներ եւ սեփական կառոյցներ ունենալու ուղղութեամբ:

Տեղեկագիրին մէջ կը նշուի, որ արդի Թուրքիոյ հիմնադիր Քեմալ Աթաթուրքի ազգայնականութիւնը վերածուած է «պաշտօնական գաղափարաբանութեան, կամ նոյնիսկ նոր կրօնքի մը՝ բացարձակ ճշմարտութեան կարգավիճակով»:

Տեղեկագիրը կը յանձնարարէ, որ իշխանութիւնները «յատուկ սկզբունքներ հաստատեն, ուր ազգայնականութիւնը չ'օգտագործուի կրօնական փոքրամասնութիւններու դէմ»:

ՄԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԿՐ ԴԱՏԱՊԱՐՏԵ ԻՍՐԱԷԼԸ

ՄԱԿի Ընդհանուր ժողովը, որ տեղի ունեցաւ Շարք օր Նիւ Եորքի կեդրոնատեղիին մէջ, որդեգրեց բանաձեւ մը, որ կը դատապարտէ Իսրայէլի կողմէ չափապանցուած ուժի գործածութիւնը պաղեստինցի քաղաքայիններու դէմ:

Բանաձեւին ի նպատակ քուէարկեցին 92 երկիրներ, դէմ քուէարկեցին վեց երկիրներ, մինչ 46 ուրիշներ ձեռնպահ մնացին: 45 երկիրներ բացակայ էին: Բանաձեւը որդեգրուած էր երկար բանավեճերէ ետք:

Միացեալ Նահանգներ, Իսրայէլի եւ Խաղաղականի քանի մը երկիրներ դէմ դրին բանաձեւին: Ամերիկացի դեսպանը ըսաւ, որ անիկա կողմնակալ է եւ անելով պիտի սրէ յարուածութիւնը:

Բանաձեւը կոչ ուղղեց բոլոր կողմերուն անմիջապէս գործադրութեան դնելու Շարքի 125 յիսի համաձայնութիւնը:

Երոպական Միութիւնը իբրեւ մէկ ճակատ չքուէարկեց, որովհետեւ Բրիտանիա, Իտալիա, Հոլանտա, Գերմանիա եւ Ըուէտ ձեռնպահ մնացին, մինչ մնացեալները թեր քուէարկեցին:

Բանաձեւը պորավիզ կը կանգնի նաեւ ամերիկեան հովանաւորութեամբ քննութեան մը ծրագրին:

Իսրայէլ անմիջապէս հակադարձեց դատապարտելով Ընդհանուր ժողովի բանաձեւը՝ վայն կողմնակալ եւ ոչ առարկայական նկատելով: Արտաքին գործոց նախարարութիւնը դժգոհութիւն յայտնեց, որովհետեւ ՄԱԿ անտեսած է Իսրայէլի քուէարկութիւնը Կիւնտի Կիւնտի Կիւնտի սպանութիւնը: Բանաձեւը կը խուսափի նշելէ, թէ պաղեստինեան իշխանութիւնը կազմակերպած եւ արհարած է արիւնյալի միջադէպեր, աւելցուց արտաքին գործոց նախարարութեան կողմէ արաբականութեամբ յայտարարութիւնը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՐԱԲԱԿԱՆ ՎԵՐԱԺՈՂՈՎԸ ԱԻԱՐՏԵՑ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ...

Շարունակում Ա. Էջեմ

Հաղորդագրությունն էր բարկացած՝ Լիպիոյ ներկայացուցիչը կիսատ ձգելով վեհաժողովը հեռացավ ժողովարանից:

Թունույ յայտարարեց, որ խլած է Իսրայելի հետ դիւստրակտիկան կապերը, որոնք սակայն դեսպանի մակարդակի չէին: Կառավարությունը յայտնեց, որ փակած է ԹԵԼ Արիի ներկայացուցչական իր գրասենեակը, ինչպես նաև՝ Թունույի մէջ գտնուող իսրայելեան գրասենեակը:

Քաթար յայտնեց, որ վերատեսութեան պիտի ենթարկէ Իսրայելի հետ իր կապերը:

ՊԱՅՔԱՐԸ ՊԻՏԻ ՃԱՐՈՒՆԱԿՈՒԻ ՄԻՆՉԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ

ԿԸՄԵ ԱՐԱՖԱՐ



Եսաեր Արաֆաթ՝ ժողովի ընթացքին:

Վեհաժողովին արտասանած իր խօսքին մէջ, պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաեր Արաֆաթ ըսաւ, որ իր ժողովուրդը պիտի շարունակէ Իսրայելի դէմ պայքարը մինչեւ յաղթանակ: Արաֆաթ սակայն աւելցուց, որ պաղեստինցիները տակաւին կառչած են խաղաղութան, հակառակ անոր որ Իսրայել «հաւաքական շարժեր եւ բարբարոս ոմբակոծումներ» կը կատարէ: Ան վերստին շեշտեց, որ պաղեստինցիները պիտի ունենան անկախ պետութիւն մը, որուն մայրաքաղաքը Արեւելեան Երուսաղէմն է:

Միւս կողմէ, պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատար մը ըսաւ, որ Արաֆաթ պաղեստինեան ոստիկանութեան պիտի հրահանգէ արգիլել իրական փամփուշտներու գործածութիւնը իսրայելեան ուժերուն դէմ: Յիշեալ աղբիւրին համաձայն, այս հրահանգը պիտի մեղմացնէ բախումներուն աստիճանը:

Վեհաժողովը հիւրընկալող նախագահ Հիւսնի Մուպարաթ. բացման խօսքին մէջ դատաւարտեց Իսրայելի «կոռուպան» կեցուածքը պաղեստինցիներուն դէմ: Մուպարաթ կոչ ուղղեց Իսրայելէն՝ արդար եւ մնայուն խաղաղութիւն մը հաստատելու: Ան ընդունեց, որ արարները բարկացած են եւ ընդվզած. սակայն անոնց ղեկավարները պէտք է պաշտպանեն Կանոնը՝ զգացական, ծայրայեղական եւ չափազանցուած արարքներէ:

ԻՍՐԱՅԷԼ ԴԱՏԱՊԱՐՏԵՑ ԱՐԱՖԱՐԸ ԵՒ ԴՈՒՄԱՏԵՑ ՍՈՒՊԱՐԱԶԸ

Իսրայել քննադատեց Արաֆաթը, դիտել տալով որ անոր ճառը աւելի կը հրահրէ կացութիւնը: «Արաֆաթի խօսքը չափազանցուած կերպով ծայրայեղական էր եւ անհիմն ձեւով Իսրայելի դէմ պայտուսութիւններ կը հրահրէ», ըսաւ վարչապետ Էհուտ Պարաթի բանբեր Նախմասն Շայ:

Շայ պարմանք յայտնեց, որ Արաֆաթ ինչպէս մէկ կողմէն կ'ըսէ, որ պաղեստինցիները զօրավիզ կը կանգնին խաղաղութեան գործընթացին եւ միւս կողմէ կը յայտարարէ, որ ինքիֆատան պիտի շարունակուի:

Պարաթ, իր կարգին, երէկ յայտարարեց, որ որոշ ժամանակի մը համար պիտի առկախէ պաղեստինցիներուն հետ խաղաղութեան բանակցութիւնները: Պարաթի գրասենեակին կողմէ հրապարակուած յայտարարութիւն մը մերժեց եւ անընդունելի նկատեց արաբական վեհաժողովին աւարտին հրապարակուած հաղորդագրութեան սպառնալից նոճը:

Միւս կողմէ, Պարաթ դրուատեց Մուպարաթը, որ յաջողած է հաւասարակշռուած մտեցում մը ունենալ արաբական վեհաժողովին:

ՀԱՍՍԱՍ ԵՒ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՊԱՂԵՍՏԻՆՅԻՆԵՐԸ ԴՅՈՒՑ ՎԵՐԱԺՈՂՈՎԸ

Համաս, Իսլամական Ժիհադ ու պաղեստինեան արմատական շարժումներ դատաւարտեցին արաբական վեհաժողովին արդիւնքը, դիտել տալով, որ որոշումները չեն գոհացնէր արաբական նուապագոյն պահանջները:

Պաղեստինեան արմատական շարժումներուն ղեկավարները յայտնեցին, որ յուսախաբեղած են վեհաժողովին որոշումներէն: Անոնք աւելցուցին, որ պաղեստինեան նոր ինքիֆատան, որ ծայր տուաւ Սեպտեմբեր 28ին, պիտի շարունակուի:

Համասի ղեկավարներէն Մուսթաֆա Լիտաուի ըսաւ, որ կ'ակնկալուէր, որ վեհաժողովին որոշում տրուէր Իսրայելի հետ արաբական սահմանները բանալու, որպէսզի պաղեստինցիները եւ բոլոր արաբները կռուին հրեական բանակին դէմ: Ան աւելցուց, որ նուապագոյն ակնկալութիւնը այն էր, որ արաբները խլեն Իսրայելի հետ դիւստրակտիկան կապերն ու համաձայնագիրները:

Համասի այլ ղեկավար մը՝ Իպրահիմ Կոչէ ըսաւ, որ արաբները մերժեցին նաեւ քարիւղը իբրեւ վէճը գործածել:

Է.Փ. Փէ. Էլ. Փէ.ի ղեկավարներէն՝ Մահեր Թահեր ըսաւ, որ ընդունելի երեւոյթ չէ, որ արաբական մայրաքաղաքներու մէջ Իսրայել-

ի զրօշակները շարունակեն ծածանիլ, մինչ հրեական պետութեան բռնարարքները կը շարունակուին պաղեստինցիներուն դէմ: Թահեր աւելցուց, որ վեհաժողովը պէտք էր դատաւարտէր նաեւ Միացեալ Նահանգները, որոնք կողմնակալ են եւ կը պաշտպանեն Իսրայելը:

Պաղեստինցի բանագնաց Հասան Ասֆուր եւ յուսախաբութիւն յայտնեց: Ան ըսաւ, որ վեհաժողովը պէտք չէր բաւարարուէր Իսրայելը դատաւարտելով. անիկա պէտք էր պատժամիջոցներ որդեգրէր հրեական պետութեան դէմ:

Միւս կողմէ, պաղեստինեան շրջաններուն մէջ բախումները շարունակուեցան շաբաթվերջին: Շաբաթ օր չորս պաղեստինցիներ սպաննուեցան եւ տասնեակ մը ուրիշներ վիրաւորուեցան Կապալի եւ Սյարյորդանանի մէջ: Բնիւնները տեղի ունեցան Ուրբաթ օր սպաննուած ինը պաղեստինցիներու յուղարկուողութեան ընթացքին: Ականատեսներ ըսին, որ իսրայելացիք հրասայլերով ոմբակոծած են պաղեստինցի ցուցարարները Ռամալայի մէջ:

Բախումները շարունակուեցան երէկ եւս: Կապալի մէջ սպաննուեցան 14 տարեկան պատանի մը: Աւելի ուշ, Հեպրոնի մէջ սպաննուեցան երկու պաղեստինցիներ. 124ի բարձրացրելով զոհերուն թիւը. որոնք ինկած են 28 Սեպտեմբերէն ի վեր: Չոհերուն ուրն միայն իսրայելացիներ են:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ Մար Նաբալյա Պուրոս Սֆէյր պատրիարքը երկուուան իր քարոզիկ մէջ յոյս յայտնեց, որ հայրենիքի այս օրերու ապրած մեծ տառապանքները կը յանգին վերականգնումի. որուն պահը եկած է եւ պէտք է կատարուի այնպիսի կառավարութեան մը կողմէ. որ կը ներկայանայ միացեալ եւ ներդաշնակ դիմագիծով եւ իբրեւ կազմուած՝ առակ անձնաւորութիւններ. որոնք կը ներկայացնեն իրանցիկներուն բոլոր հատուածները:

«Լիբանանի ապրած եզնամամին բերմամբ անբնգունելի է նախարարութիւններուն մէջ բաժնեկցութեան եւ աւարտ բաժնեկցութեան արմատները այսօր կը պահանջուի միայն փրկել հայրենիքը», ըսաւ Սֆէյր պատրիարքը:

● ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ Առեւտրականներու Միութիւնը գումարեց արտակարգ ժողով մը, որուն աւարտին միութեան նախագահ Փօլ Այանեան յայտնեց, թէ քննարկուած են երկրին տնտեսական եւ ընկերային դժուարութիւնները. որոնք հասած են վտանգաւոր աստիճանի եւ հրամայական դարձած է անոնց դարմանումը նոր խորհրդարանին եւ կառավարութեան կողմէ:



al-mashrek
INSURANCE & REINSURANCE S.A.L.

Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.
(01)258228 – (01)268808
Fax: (01) 258223



ARA TRAVEL IATA
ARMENIAN AIRLINES
SALES AGENT,

ՈՒՐԱՆՈՒԹԵԱՍԲ ԿԸ ՅԱՅՏԷ
ԻՐ ՅԱՐԳՈՅ ՅԱՃԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ,
ՈՐ Կ'ԱՊԱՇՏՈՎԷ

ՊԵՅՐՈՒԹ - ԵՐԵՒԱՆ - ՊԵՅՐՈՒԹ
ԵՒ ՀԱԼԷՊ - ԵՐԵՒԱՆ - ՀԱԼԷՊ
ARMENIAN AIRLINES ընկերութեան
● օդանաւային տոմսեր ● ապրանքի փոխադրութիւն

ԱՐԱ ԹՐԱՎԸԼ,
Պուրճ Համուտ, նամակատան շէնք,
Հեռ. 266594 - 261296 : FAX: 261296

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ ՇԵՇՏԸ ԴՐԱԻ...

Շարունակում Ա. Էջեմ

Նախագահ Լահուտ նաեւ հաւատեց, թէ «այնքան ատեն, որ բռնագրաւեալ արաբական հողեր կան, խաղաղութիւնը չի կրնար իրականանալ, հետեւաբար որքան արագ տանք անհրաժեշտ որոշումը, այնքան կը մօտենանք խաղաղութեան», եւ յոյս յայտնեց, որ ժողովը արաբական միացեալ որոշումի մը կը յանգի:

ՀԱՆԴՊՈՒՄՆԵՐ

Վեհաժողովին զուգահեռ, նախագահ Լահուտ Գահրի մէջ ունեցաւ բազմաթիւ հանդիպումներ: Ան սուրիացի իր պաշտօնակիցին՝ Պաշար Ասատի հետ տեսակցեցաւ երեք անգամ, ապա հանդիպումներ ունեցաւ նաեւ Սէուտական Արաբիոյ գահաժառանգ իշխան Ապտալա Պըն Ապտէլ Ահլիի, Արաբական Միացեալ Էմիրութեանց փոխ նախագահ շէյխ Մաքթում Պըն Ռաշիտի, Քուէյթի արտաքին գործոց նախարար շէյխ Սապահ Ահմէտ Սապահի:

Այժմ ինչ նախագահ Ապտէլապի Պուրաֆիքթայի, Յորդանանի Ապտալա Քալաուրիին, Թունույի նախագահ Չէյնը Ապիտին Պըն Ալիի եւ Քաթարի իշխան Համադ Պըն Խալիֆա Ալ Սանիի հետ:

ՎԵՐԱԴՈՐԵՒ ԵՒ ՀՆՈՒՎՈՒՄ ՍՈՒՊԱՐԱԶԻ

Նախագահ Լահուտ եւ պատուիրակութիւնը երէկ յետմիջօրէին վերադարձաւ Պէյրութ:

Օդանաւին մէջէն, նախագահը եզրափակեց իր պաշտօնակիցին՝ Հիւսնի Մուպարաթին յղեց հեռագիր մը, որուն մէջ շնորհակալութիւն յայտնեց իր կտուած շերտ ընդունելութեան համար,

ԾԱԽՈՒ 3ԱՐԿԱԲԱԺԻՆ

● Նոր Սիւ, հեռ. 04-416823:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

● Տալտալեան ընտանիք շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ եւ հեռաձայնով մասնակից եղան իրենց մօր, մեծ մօր եւ հարապատիւն՝ ՎԵՐԺԻ ՏԱԼՏԱԼԵԱՆԻ մահուան օրը:

ԾԱԽՈՒ 3ԱՐԿԱԲԱԺԻՆ

● Ֆանարի մէջ, 2 նշապանեակ, հիւրասենեակ եւ ճաշարան: Գին՝ 35,000 տոլար: Հեռ. 03-862554:

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

Հ.Ս.Ը.Ս. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՍԿԱՈՒՏ ԽՈՐՀՈՒՐԴ

25 ՆՈՅՏԵՄԲԵՐ 2000

մադրութիւնը տուած է պատասգրումի ձեւին մասին ճիշդ դատերը, եւ անհրաժեշտ է, որ Իսրայելի հեռանալ մինչեւ 1967ի սահմանները, ապա հողութիւն պաղեստինցի գաղթականներու տունդարձը, ապա տագրութիւն Մապարէի Շըպաան, ապա տարակրիս Իսրայելի մէջ արգելափակուած լիբանանցի պատանդները եւ դատաւարտութիւն Իսրայելի գործած ոմբակոծութիւնը:

ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏ

Նախագահ Լահուտ նաեւ յայտնեց, որ թէ եւ ժողովը պաղեստինեան հարցին յատկացուած էր, սակայն դոնփակ նիստին եւ երկկողմանի հանդիպումներուն ընթացքին ինք ընդգծած է Լիբանանի խոստացուած արաբական օժանդակութիւնները փութացնելու կարիքը:

«Արաբ ղեկավարները հաւատեցին, թէ այս անունութեամբ նոր որոշումի հարկ չկայ, որովհետեւ որդեգրուած որոշումները կը մնան ի պօրու եւ արաբական երկիրները կը մնան յանձնառու այդ գծով»:

Սուրիացի իր պաշտօնակից Պաշար Ասատի հետ ունեցած հանդիպումներուն մասին խօսելով, նախագահ Լահուտ ըսաւ. «Անոնք բնական են, նկատի ունենալով Լիբանանի եւ Սուրիոյ հասարակաց շահերն ու կեցուածքը, հետեւաբար անհրաժեշտ էին համակարգումն ու խորհրդակցութիւնները, մասնաւորապէս երկու երկիրները իրենց միացեալ, արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութեան կառչած կեցուածքով ազգային ուժի ազդակ շնորհած են արաբներուն»:

Նախագահ Լահուտ նաեւ յայտնեց, որ թէ եւ ժողովը պաղեստինեան հարցին յատկացուած էր, սակայն դոնփակ նիստին եւ երկկողմանի հանդիպումներուն ընթացքին ինք ընդգծած է Լիբանանի խոստացուած արաբական օժանդակութիւնները փութացնելու կարիքը:

«Արաբ ղեկավարները հաւատեցին, թէ այս անունութեամբ նոր որոշումի հարկ չկայ, որովհետեւ որդեգրուած որոշումները կը մնան ի պօրու եւ արաբական երկիրները կը մնան յանձնառու այդ գծով»:

Սուրիացի իր պաշտօնակից Պաշար Ասատի հետ ունեցած հանդիպումներուն մասին խօսելով, նախագահ Լահուտ ըսաւ. «Անոնք բնական են, նկատի ունենալով Լիբանանի եւ Սուրիոյ հասարակաց շահերն ու կեցուածքը, հետեւաբար անհրաժեշտ էին համակարգումն ու խորհրդակցութիւնները, մասնաւորապէս երկու երկիրները իրենց միացեալ, արդար, ամբողջական եւ վերջնական խաղաղութեան կառչած կեցուածքով ազգային ուժի ազդակ շնորհած են արաբներուն»:

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

- SONY
- TOSHIBA
- PANASONIC
- SHARP
- PHILIPS
- SAMSUNG
- PIONEER
- MEC
- GENERAL ELECTRIC
- WHITE WESTINGHOUSE
- KELVINATOR
- HOOVER
- BOSCH
- MOULINEX
- BRAUN
- MIELE

ՎՃԱՐՄԱՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ
36 ԱՄՍՈՒԱՆ ՎՐԱՅ
LISTE DE MARIAGE

Պուրճ Համուտ - Ջաղաքապետարանի հրապարակ, ՀԵՌԱԶԱՅՆՆԵՐ՝ 01-241000
Չոր. մուտք, Սանթրը Պլանդըյէն: Կառտուոնը ապահովուած:

THE CULTURAL HOUR

@

HAIGAZIAN UNIVERSITY

invites you to an illustrated lecture

on

LEBANESE AMBER: A PREHISTORIC ECOLOGICAL MUSEUM

By

RAIF MILKI (D. E. S. T.)

Thursday, October 26, 2000 - 7.00 p. m.
Haigazian University Auditorium - Kantari.

ՕԹԱՆԵԱՆ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐՈՒՄ ԸՆԹԱՅՔԻՆ

ՅՈՒՆԱԿԱՆ ԵՒ ԹՐԲԱԿԱՆ ՕԳԱՆԱԿԵՐՈՒ ՄԻՋԵՒ ԿԵՂԾ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԵՑԱՆ

Յունաստան Շաբաթ օր պահանջած է, որ Եգիպտոսի ծովային ուժերը չօժանոթանան ՌԹԱՆԵԱՆ ռազմափորձերը առկառնելու՝ անցնող երեք օրերուն յունական եւ թրքական ռազմական օդանավերուն միջեւ արձանագրուած դէպքերուն պատճառով:

Իրարու մրցակից երկու երկիրներուն ռազմական օդանավերուն միջեւ կեղծ բախումներ տեղի ունեցած են, թրքական օդանավերու կողմէ յունական օդանավերու թռիչքին խախտումներ են: Թուրքիա յայտնած է, թէ յունական օդանավերը ՕԹԱՆԵԱՆ ներկայ «Տեսթիստ կոչում» շրջանային ռազմափորձերուն գծով համաձայնուած թռիչքի օրէնքները խախտած են:

Յունաստանի պաշտպանութեան նախարար Աթին Յոնթոքիտիոս յայտնած է, թէ Յունաստան իր օդանավերը տուն պիտի կանչէ ռազմափորձերէն, Թուրքիան ամբաստանելով ՕԹԱՆԵԱՆ ռազմափորձերու օրէնքները չյարգելու յանցանքով:

Յունաստանի սպայակոյտի բանբեր Տիմիթրիոս Տոթաս «Ռոյթըրզ» լրատու գործակալութեան յայտնած է, թէ Թուրքիա արգելափակած է ՕԹԱՆԵԱՆ ռազմափորձերուն մասնակցող յունական օդանավերուն՝ օդային իր տարածք մուտք գործել:

Թուրքիոյ սպայակոյտը ըսած է, որ վզուշացուցած է ՕԹԱՆԵՐ, թէ յունական ռազմական օդանավերը պէտք չէ թռիչք կատարեն ապառազականացած իրողափձակ ունեցող կղզիներու վերեւ:

«ՕԹԱՆԵԱՆ իշխանութիւնները վզուշացուցած էին, թէ անբաղձալի հետեւանքներ կրնան ծագիլ եթէ յունական օդանավեր շարունակեն ՕԹԱՆԵՒ եւ թռիչքի ապահովութեան վերաբերեալ օրէնքները բռնաբարել», ըսած է Թուրքիոյ սպայակոյտը հաղորդագրութեան մը մէջ:

Թրքական բանակը յայտնած է, թէ ՕԹԱՆ Շաբաթ օր արգիլած է յունական օդանավերուն, որ Եգիպտոսի վերեւ թռիչք կատարեն:

ԵԳԻՊՏԱՆԻ ՕԳԱՅԻՆ ՏԱՐԱԾԵՒ ԻՐԱՌՈՒՆԵՐ ԿԻՃԱԲԱՆՈՒԹԵԱՆՑ ԱՌԱՐԿԱՅ

Ռազմափորձերը սկսած էին Հոկտեմբեր 7ին, երբ յունական ռազմական օդանավեր թրքական հողամասի վրայ էջք կատարած էին:

Սակայն մթնոլորտը լարուած էր յունական օդուծի օդանավերուն Եգիպտոսի ծովուն մէջ վիճելի կղզիներու վերեւ թռիչք կատարելու հարցով:

Կիպրոսի մէջ պինուորական աղբիւրներ յայտնած էին, թէ յունական չորս օդանավերու թռիչքը խախտուած է Կիպրոսի եւ Ռոտոսի միջեւ:

Թրքական օդանավերը հեռացուած են յունական այլ օդանավերու կողմէ, որոնք կեղծ յարձակումներու ձեռնարկած են: Նման միջադէպեր արձանագրուած են նաեւ Հինգշաբթի եւ Ուրբաթ օրերուն:

Թրքական հաղորդագրութիւնը ըսած է, թէ թրքական օդանավեր Շաբաթ օր յունական օդանավերու թռիչքը կասեցուցած է պարտադրած են անոնց, որ իրենց խարխիւները վերադառնան:

Յունական «ԷՖ-16» տիպի երկու օդանավեր Շաբաթ օր Փաֆոս քաղաքի կիպրական խարխիւր էջք կատարած են:

ՕԹԱՆԵԱՆ ռազմափորձերը պիտի շարունակուին մինչեւ Հոկտեմբեր 26:

Երկու երկիրներուն միջեւ խոր տարակարծութիւններ գոյութիւն ունին հողային հարցերու եւ Եգիպտոսի վերեւ օդային տարածքին, ինչպէս նաեւ Կիպրոսի հարցերով:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՔՈՇԹՈՒՆԻՅԱ ԱՅՅԵԼԵՑ ՊՈՍՆԻԱ



Քոշթունիցա Սարաեւոյի մէջ, աստիճախ պահուց:

Պոսնիոյ սերպ դեկավարները Եուկոսլաւիոյ նոր նախագահ Վոյսլաւ Բոշթունիցայի նախագահական ընդունելութիւն մը վերապահած էին երէկ՝ անոր նախկին եուկոսլաւ հանրապետութեան սերպական բաժինը վիճելի այցելութեան մը առիթով:

Քոշթունիցա Պոսնիոյ յետպատերազմեան միացեալ դեկավարութեան նամակ մը յղած է ըսելով, որ ասիկա անձնական այցելութիւն մըն է, որ պիտի չբարաբարականացուի:

Սակայն դեկավարութիւնը բողոքած է, թէ այցելութիւնը կը բռնաբարէ դիւանագիտական փրոթոգոյր՝ մայրաքաղաք Սարաեւոյի խողովակով չկազմակերպուելով:

Պոսնիոյ միացեալ դեկավարութիւնը Ուրբաթ օր յայտնած է, որ Քոշթունիցայի նամակը չի փարատեր այցելութեան գծով կասկածները: Շաբաթ օր Քոշթունիցա կը թուեր տեղի տուած ըլլալ Պոսնիան դեկավարող միջազգային պաշտօնատարներու ճշումներուն առջեւ, ըսելով, թէ ան պիտի այցելէ նաեւ Սարաեւո:

Այդ մայրաքաղաքը այցելութիւնը եուկոսլաւ նախագահի մը կողմէ առաջինն է, Պոսնիոյ 1992ին անկախութիւն հռչակելէն ի վեր:

ԹՈՒՐԳԻՈՅ ՄԷՋ ՆՈՐ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

ՊՈԼԻՍ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Թուրքիա կիրակի օր անշարժացած էր՝ մարդահամարի նպատակով հաստատուած «կրակմարի դրուժեան» պատճառով:

1997ին կատարուած վերջին մարդահամարը ցոյց տուած էր, թէ 62,6 միլիոն մարդ կ'ապրի Թուրքիոյ սահմաններուն մէջ:

Պաշտօնատարները կ'ակնկալեն, որ այս տարուան մարդահամարը ցոյց տայ, թէ ընդհանրապէս թիւը փոքր համեմատութեամբ աւելի բարձր է, ինչպէս նաեւ կարեւոր տարբերութիւններ իրար ընդհանրապէս արեւմուտքին եւ կեդրոնական եւ արեւելեան Անատոլիոյ աւելի աղքատ նահանգներուն միջեւ:

Մէկ միլիոն պաշտօնատարները, որոնք կը շրջէին երկրի տարածքին, բնակիչներուն կը հարցնէին բազմաթիւ հարցումներ, որոնք սակայն կրօնքի կամ մայրենի լեզուի չեն վերաբերիր, նկատի ունենալով, որ անոնք նուրբ հարցեր են երկրին մէջ:

ԻՐԱՆԵԱՆ ՄԵԾ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐ՝ ՀՈՐՄՈՒԶԻ ՄԷՋ

ԹԵՀՐԱՆ, 22 (ՌՈՅԹԸՐԸ).- Իրան ութօրեայ մեծ ռազմափորձերու պիտի ձեռնարկէ յառաջիկայ կիրակի օր Հորմուզի նեղուցին մէջ, յայտնեց ծովուծի հրամանատար մը:

Ծովակալ Մորթեզա Սաֆարի ըսաւ, որ ռազմափորձերը տեղի պիտի ունենան Հորմուզի նեղուցին, Պարսից ծոցին եւ Օմանի ծոցին մէջ: Ռազմափորձերուն պիտի մասնակցին ծովուծի, օդուծի ու ցամաքային ուժերը, ինչպէս նաեւ՝ յեղափոխական պահակազույնը: Սաֆարի աւելցուց, որ 180 մարտնական, երեք սուզանակներ, յիսուն օդանավեր եւ ուղղաթիւներ բաժին պիտի ունենան:

Միւս կողմէ, ԻՐԱՆ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Շարաթ օր Հրթիռներ արձակուած են Թեհրանի թաղամասերէն մէկուն վրայ: Ընդդիմադիր Մուսաւիսիին խալք շարժումը յայտնեց, որ ինք կատարած է գործողութիւնը՝ յեղափոխական պահակազույնին երկու կեդրոնատեղիներու դէմ:

ԻՐԱՆԻ ներքին գործոց փոխ նախարար Մոսթաֆա Թաթաւազ կ'առաջարկէ Մայիս 25ին կայացնել նախագահական ընտրութիւնները: Առաջարկուած թուականը պէտք է պահանջէ սահմանադրութեան գործադրութեան հսկող պահանջողական խորհուրդը:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՌՈՒՍԻԱ ՎՐԱՍՏԱՆԸ Կ'ԱՄԲԱՍՏԱՆԵ ԶԵՉԵՆ ԸՄԲՈՍՏՆԵՐՈՒ ԱՊԱՍՏԱՆ ՏԱԼՈՒ ՅԱՆՅԱՆՔՈՎ

Խոնք մը չէլէն ըմբոստներ, որոնք Ուրբաթ օր Վրաստան մտած են, կ'ուզեն վրացական հողերէն Արաբիան կամ Թուրքիա անցնիլ, հաղորդած է վրացական պատկերասփիւռ երէկ: Վրաստանի սահմանապահ ուժերու մէկ բանբերը յայտնած է, որ վրացի պաշտօնատարներ աւելի քան 60 ըմբոստներուն հետ կը բանակցին՝ Իսկուշեթիոյ սահմանէն ոչ շատ հեռու անտառի մը մէջ:

«Կացութիւնը հակակշիռի տակ է», ըսած է Սուսո Մարկիշվիլի. աւելցնելով, որ յաւելեալ պինուորներ եւ ոստիկաններ դրուած են շրջան: Գաշակցային Ռուսիոյ սահմանային սպասարկութիւնը հերքած է, թէ արտօնութիւն տուած է չէլէններու խմբակին, որ Վրաստան քափանցէ:

Ռուսիա Վրաստանը ամբաստանած է չէլէն ըմբոստներու իր հողերը իբրեւ ապաստան եւ վէճերու փոխադրութեան անցք գործածելու իրաւունք տալով, սակայն Վրաստան կը հերքէ նման բան:

ՌՈՒՍ 3 ԶԻՆՈՒՐ ՄՊԱՆՈՒՄ

Միւս կողմէ, Ռուսիոյ «Ար. Այ. Էյ.» լրատու գործակալութիւնը շաբաթվերջին հաղորդած է, որ ներքին ապահովութեան անցք գործածելու իրաւունք տալով, սակայն Վրաստան կը հերքէ նման բան:

Անոնք սպաննուած են երբ Տաղստանէն Չէլչենիա տանող ճամբու մը վրայ անոնց փոխադրակառքին վրայ կրակ բացուած է:

Է.Ֆ. Էս. Պի.ի երկու այլ սպաներ ծանրօրէն վիրաւորուած են:

Ըմբոստները նաեւ Շաբաթ օր չորս պինուոր վիրաւորուած են մայրաքաղաք Կրոյնի մէջ պինուորական կարաւանի մը վրայ յարձակումի մը ընթացքին:

Պաշտօնակա թիւերու համաձայն, անցեալ տարուան Հոկտեմբերէն ի վեր ռուսները աւելի քան 2400 կոտ եւ շուրջ 7000 վիրաւոր ունեցած են:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՐԸՐԻՒՂԻ ԱՐՏԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆՄԵՉԱՊԵՄ ԱՒԵԼՅՆԵԼՈՒ ԳՆՈՎ

ՌԻՉԸՐՏՍԵՆ ԶԿՐՅԱԻ ՌՈՏՐԻԿԵՉԸ ՀԱՄՈՉԵԼ

Միացեալ Նահանգներու ուժանիւթի նախարար Պիլ Ռիչըրտսը շաբաթվերջին վենեզուելայի մէջ տեսակցութիւն ունեցաւ Սֆիթի նախագահ Ալի Ռոսորիկէզի հետ, պահանջելու համար, որ կազմակերպութիւնը բարձրացնէ քարիւղի արտադրութեան քանակը:

Ռոսորիկէզ Ռիչըրտսընի փոխանցած է, որ ՕՖԻՔ արդէն իսկ որոշած է անհրաժեշտ միջոցառումներու դիմել, երբ կարիքը զգացուի: Ռիչըրտսըն չյաջողեցաւ արտադրութիւնը անմիջապէս աւելցնելու խոստում տալու Ռոսորիկէզին, որ շեշտեց, թէ ՕՖԻՔ ունի իր քաղաքականութիւնը, որուն կառուցած պիտի մնայ՝ հաւասարակշռուած պահելու համար քարիւղի սակերը:

ՕՖԻՔ որոշած է Ուրբաթ օրու ընէ սկսեալ օրական հինգ հարիւր հազար տակաւորով բարձրացնել քարիւղի արտադրութիւնը՝ նուազեցնելու համար սակերը, որոնք արտասովոր կերպով բարձրացած են:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԹՈՒՐԳԵՒՔՐՏԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ ՀԱՔՔԱՐԻ ՄԷՋ

Թուրքիոյ գլխաւորաբար քրտական հարաւարեւելեան գօտիին մէջ պաշտօնատարներ Շաբաթ օր յայտնուած են, թէ թրքական բանակը սպաննուած է քիւրտ անջատողական 6 ըմբոստներ, որոնց շուրջ կան կասկածներ, թէ 3 քաղաքայիններ սպաննուած են:

Շրջանին մէջ ապահովութեան ուժերուն եւ ՔԱԿԻ պինուորներուն միջեւ բախումները մեծ համեմատութեամբ նուազած են անցեալ տարուան ի վեր, երբ ՔԱԿԻ դեկավար Ապարիլյա Օճայան իր պինուորներուն հրահանգած էր Թուրքիայէն քաշուիլ քաղաքական ուժի մը վերածուելու համար, քրտական մշակութային իրաւունքներ ձեռք ձգելու նպատակով:

Ուրբաթ օր բանակային ջոկատներ գործողութեան ձեռնարկած են Հաքքարի նահանգին մէջ 3 գիւղացիներու դիակներու յայտնաբերումէն ետք:

(ՌՈՅԹԸՐԸ)

قرض السيارات

القرض صالح للسيارات الجديدة والمستعملة.
 7% فائدة ثابتة على السيارات الجديدة (مدة التسديد 48 شهرا).
 8.75% فائدة ثابتة على السيارات المستعملة (مدة التسديد 36 شهرا).
 لمزيد من المعلومات، اتصلوا بمركز خدمة الزبائن على الرقم: 01-900111
 أو عبر الانترنت info@creditlibanais.com.lb أو زوروا أحد فروع الاعتماد اللبناني.

الاعتماد اللبناني
CREDIT LIBANAIS

دائما بقربك
 www.creditlibanais.com.lb

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ԱՐՄԵՆԻՔԱ»

ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹԻՆ 15ՐԴ ԹԻՒԸ

Վերջերս լոյս տեսաւ «Արմենիքա» լուսարէն պարբերաբերին 15րդ թիւը: Պարբերաբերին կողքին վրայ կայ Մարտիրոս Սարգսի «Հոկտեմբեր Երեւանի մէջ» գծանկարը, որ կը ներկայացնէ Հայաստանի աշունը:

«Արմենիքա»-ի խմբագրական կ'անդրադառնայ թերթին երկուրուկէս տարիներու հրատարակութեան, պայմաններուն եւ լուսարէնով հրատարակուող պարբերաբերի մը անհրաժեշտութեան: Հրատարակութիւն մը, որ ուղղուած ըլլայ անոնց, որոնք իրենց անմիջական կապը կ'ընդունուին եւ հայրենասիրին հետ:

Սոյն թիւին մէջ կայ նաեւ հարցարան մը, որով ընթերցողները կրնան պատասխանելու «Արմենիքա»-ի թերթին առնչուող կարգ մը հարցումներուն: Տրուած են նաեւ Սեպտեմբեր - Հոկտեմբեր ամիսներու հայրենական լուսարէնը, ինչպէս՝ Յունաստանի կրթութիւն ու լուսարէն վարին Երեւան այցելութիւնը, Կոլմարի լուսարէնը անոնցու հարցերը, Յրանապի Ծերակոյտին եւ Անգլիոյ խորհրդարանին կատարած փորձերը, Հայաստան - Իրան համագործակցութիւնը, Հարեգին Բ. կարողիկոսի այցելութիւնը, Հայաստանի նախագահ Ռոպոսի Քոչարեանի ունեցած գործունէութիւնը, Կիպրոսի հետ յարաբերութիւններու վարպետներու մասին: Անդրադարձ մը կայ նաեւ Յունաստանի մէջ տեղի ունեցած հայ եւ լոյս առեւտրականներու համագումարին մասին:

«Արմենիքա» կ'անդրադառնայ Հայկական Յեղասպանութեան հարցի քննարկման առընչութեամբ թրքական գրգռիչ քաղաքականութեան:

Այս առնչութեամբ պարբերաբերին մէջ լոյս տեսած է նիւթ մը «Մայրոսոֆոս» համակարգչային ընկերութեան դէմ արձակուած թրքական սպառնալիքներուն մասին: Ընկերութեան ելեկտրոնային հանրագիտարանին՝ «Էքսպրոս»-ի մէջ Հայկական Յեղասպանութեան մասին ակնարկ մը կար:

Երկրորդ դէպքը առնչուած է Լոնտոնի մէջ տեղի ունեցած ցեղասպանութիւններու նկարներու ցուցահանդէսին, որուն ընթացքին ցուցադրուած էին նաեւ Հայկական Յեղասպանութեան նկարները: Անգլիոյ մէջ թրքական դեսպանատունը բողոք ներկայացուցած էր ցուցահանդէսի կազմակերպիչներուն՝ պահանջելով անոնցմէ, որ Հայկական Յեղասպանութեան վերաբերող նկարները վերցուին:

«Արմենիքա» թերթի այս թիւին մէջ լոյս տեսած են երկու հարցապրոցներ՝ Հայաստանի մէջ Յունաստանի դեսպան Փանայոթի Զոկրաֆոսի եւ լուսահայ երաժիշտ Յակոբ Գոլանեանի հետ:

Հարցապրոցին մէջ Զոկրաֆոս կ'անդրադառնայ հայ - լուսական յարաբերութիւններուն: Ան կ'ըզէ, թէ Հայաստան ամէնէն ժողովրդավար երկիրն է շրջանի մէջ, եւ երկու ժողովուրդներուն ու կառավարութիւններուն միջեւ գոյություն ունին յարգանքի բարձր վգացումներ:

Գեականին հետ կատարուած հարցապրոցը կ'անդրադառնայ նաեւ հայ մշակոյթի բարձր որակին, հայ ժողովուրդի արժէքներուն, Հայաստանի բնականութեան արտագաղթին եւ անոր վստահներուն:

Երկրորդ հարցապրոցը կ'անդրադառնայ երաժիշտ Յակոբ Գոլանեանի երաժշտական ուսումին, յաճախած երաժշտանոցներուն, մասնակցած համերգներուն եւ սպազայ ծրագիրներուն:

«Արմենիքա» յօդուածով մը մանրամասնօրէն կ'անդրադառնայ նաեւ ամառը Հայաստանի մէջ կազմակերպուած սփռնապատկար ուսուցիչներու վերադարձին ուսումնական սեմինարին, այդտեղ կատարուած աշխատանքներուն, հանդիպումներուն, այս այցելութիւններուն ծանօթութիւններուն, սեմինարին մթնոլորտին եւ այսպիսի նախաձեռնութեան մը կարեւորութեան:

«Արմենիքա»-ի մշակութային էջերը յատկացուցած է Ռուբէն Շախվերդեանի ծննդեան 100ամեակին, անոր գործերուն եւ կեանքին՝ նկարներով եւ ակնարկներով: Նկարներով բաւական ճոխ բաժին մը կայ նաեւ 1992էն 1999 լոյս տեսած Հայաստանի դրոշմաթուղիներուն մասին:

Գոյութիւն ունի նաեւ յատուկ անդրադարձ մը վերջերս մահացած ծանօթ գեղանկարիչ Գառնիկի (Գառնիկ Զուլումեան) մասին:

«Արմենիքա»-ի այս թիւով ընթերցողներուն կը ծանօթացնէ Հայաստանի Տաւրի մարզին:

Գոյութիւն ունի նաեւ միահարուստ մը հայասեր լոյս երաժիշտ Քոչարայի Ղալիբեկի մասին: Վերջինիս մասին կ'ըստի, թէ «Ինչու պիտի յիշէք Վինսթրի» իբրեւ իսկ ժողովուրդի շերտ բարեկամ: Լոյս տեսած են երկու նկարներ՝ Լորիս Ճգնաւորեանի եւ Սոս Սարգսեանի հետ, Լ. Ճգնաւորեանի Երեւանի սիմֆոնիք նուագախումբը ղեկավարած միջոցին:

Մարգարիտ բաժինին մէջ, լուսարէն կողքին, «Արմենիքա» հարցապրոցը մը ունեցած է հայրենի ֆուտբոլիստ եւ Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի խմբագրուող Երուանդ Սուրբեանի մասին: «Արմենիքա» ակնարկով մը կ'անդրադառնայ նաեւ Հայ Սեւ Գօտիներու Միութեան աշխատանքներուն:

Վերջապահութեամբ «Արմենիքա» ակնարկով մը ներկայացուցած է Սփիւռքի տարածքին հայերու տարած մշակութային գործունէութիւնը, ինչպէս նաեւ՝ «Տը Արմինիլու» գիրքն ու «Նայթ Արթ»-ի նոր ձայնները: Նկարներով անդրադարձ մը կայ նաեւ լուսահայ գաղութի կեանքին եւ գործունէութեան մասին:

ՆՈՅԵՄԲԵՐ 23ԻՆ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԹԵԼԵԹՈՆ՝ ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱՐ

Նախագլխի հաղորդած էինք, որ 17 Հոկտեմբերին «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի տնօրէն Վահան Տէր Ղեւոնդեան մամուլի ասուլիս մը տուած է, որուն ընթացքին մանրամասնութիւններ փոխանցած է 23 Նոյեմբերին Լոս Անճելէսի մէջ տեղի ունենալիք Հիմնադրամի 4րդ թիւթրոնին մասին:

Հայրենի «Ազգ» օրաթերթը իր 18 Հոկտեմբերի թիւով երկարօրէն կ'անդրադառնայ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի վերոյիշեալ 4րդ թիւթրոնին եւ Վահան Տէր Ղեւոնդեանի մամուլի ասուլիսին:

Թիւթրոնը պիտի տեւէ 11 ժամ. անոր նպատակն է ամբողջութեամբ աւարտել Լեւոնդի Ղարաբաղի Հանրապետութեան հիւսիս-հարաւ 170 քմ. մայրուղիի շինարարութիւնը:

Ի տարբերութիւն նախորդ տարիներուն տեղի ունեցած թիւթրոններուն, այս անգամ Հիմնադրամը նախատեսած է Հանրապետութեան գլոմալ մաս մը տրամադրել նաեւ Գիւմրիի մէջ գտնուող 4 դպրոցներու շինարարութեան, բարելաւման եւ կահավորման (չուրջ 1 միլիոն 200 հազար տոլար):

Յայտնենք, որ ներկայիս արդէն իսկ 170 քմ. մայրուղիին նախագծման աշխատանքները աւարտած են: Մայրուղիին երկու հատուածներուն մէջ սկսած են շինարարական աշխատանքները. առաջին հատուածին երկարութիւնը 10 քիլոմետր է, որ կարմիր Շուկայի գիւղը կը կապէ Դրախտիկին, իսկ հիւսիսային հատուածը կ'երկարի Դաւանալու գիւղի խաչմերուկէն դէպի Գիւլան:

Վերջինիս երկարութիւնը նախատեսուած էր 15 քիլոմետր, սակայն Հաշուառնելով, որ յաջորդ տարի քրիստոնէութեան պետական կրօն հոչակման

1700ամեակի տօնակատարութիւնն է եւ նկատի ունենալով, որ Արցախ մեկնող զրօսաշրջիկները առաջին հերթին պիտի ուզեն Գանձասար այցելել, մայրուղիին վրայ աւելցուած է 5 քիլոմետր ստանդարտ մը կառուցումը:

Վահան Տէր Ղեւոնդեան մամուլի ասուլիսի ընթացքին յայտնած է, թէ յառաջիկայ տարուան Ցուլիս ամսուան կարելիութիւն պիտի ստեղծուի Հաւագործման յանձնելու 30 քիլոմետրոց ճամբուն (Կարմիր Շուկայ - Դրախտիկ եւ Դաւանալու - Կիւլան):

Ան շատ կարեւոր նկատեց նաեւ Հայաստանի քաղաքացիներուն եւ արցախահայութեան թիւթրոնի մասնակցութիւնը, թէ կուզէ՞ շնչին գումարներով, որովհետեւ «մեր մասնակցելը կամ չմասնակցելը դրական կամ բացասական գեղեցկութիւն կ'ունենայ ընդհանուր դրամահաւանք վրայ: Բարոյական առումով լաւ չէ, երբ Հայաստան եւ յատկապէս Հայ գործարարներ չեն մասնակցելը»:

«Հայաստանի մէջ տարածուած այն խօսակցութիւնները, որոնք Համաձայն, Ղարաբաղը պիտի մնայ: Ազգայնական կազմին մէջ, իր թէ Մեղրին պիտի փոխանակուի Լաչինին հետ եւ նման տարածանութիւններ լի նչպէս կ'անդրադառնան դրամահաւանքի գործունէութեան վրայ»: «Ազգի հարցումին պատասխանելով՝ Վ. Տէր Ղեւոնդեան նշեց, որ թէ՛ եւ Հիմնադրամը քաղաքական գործունէութեամբ չի զբաղիր, սակայն անկախ ամենէն մեծ քաղաքականութիւնն է: «Կը փորձենք անկախ կերպով օգնել յիւսնազէտներուն, որոնք բանակցութիւններու սեղանին չուրջ նստելով՝ իրենք զիրենք աւելի ամուր պիտի զգան», ըսած է Վ. Տէր Ղեւոնդեան:

ԳԱՂԹԻ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԱԾ ԾՐԱԳԻՐՆԵՐ Կ'ԻՐԱԿԱՆԱՅՆԷ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ

19 Հոկտեմբերին, ՄԱԿի գրասենեակին մէջ Գաղթի (ՄԻԿԻՆՆՅՐԵ) Միջազգային կազմակերպութեան (ԳՄԿ) գրասենեակի ղեկավար Նիլս Պարուան լրագրողներուն ծանօթացուց կազմակերպութեան աշխատանքը: Ան ըսաւ, թէ Հայաստանի մէջ, որ ԳՄԿի անդամ երկիր եղած է 1933 թուականին, կազմակերպութեան գործունէութիւնը Հիմնուած է շրջանային մօտեցումներով վրայ, որոնք կ'իրականացուին ընդհանուր եւ համակարգուած ծրագրներով միջոցով, նաեւ՝ Վրաստանի մէջ, որ ԳՄԿի անդամ է:

Ն. Պարուան ներկայացուց այն ծրագրերը, որոնք կը ներառեն տեղափոխութեան կառավարման բնագաւառին մէջ քառափուլի Հիմնի արարչագործը, զաղթականներու խնդիրներով զբաղող տեղական հասարակական կազմակերպութիւններու զարգացում, փոքր ձեռնարկատիրութիւններու զարգացման միջոցով ինքնուրոյնութեան ձեռքբերում եւ համարվում, ինչպէս նաեւ՝ Հայաստանէն մարդոց անօրինական փոխարումներու վերաբերեալ ուսումնասիրութիւններ:

Ան ըսաւ նաեւ, որ փոքր նախադիմներ

ուն հիմնադրած ստեղծուած է օգնելու համար համագործակցող կեդրոններուն: Անդրկովկասի երեք երկրներու համագործակցող կոմիտէներուն միջեւ շրջանային տեղեկատուական ցանցը կը նպաստէ երկխօսութեան զարգացման: Այս տարի 35 հազար տոլար ընդհանուր գումարով 8 ղրամաշնորհ յատկացուած է 11 կազմակերպութիւններու՝ զաղթականներու առողջապահական խնդիրներու եւ անկանոն զաղթերու թնամտիկ ծրագրներու իրականացման համար: Մեծ ուշադրութեան կ'արժանանայ նաեւ Հայաստանէն մարդոց անօրինական փոխարումներու ընդմիջումը ու ծաւալը բացայայտելու աշխատանքը: Այդ ուղղութեամբ Դեկտեմբերին պիտի սկսի ծրագիր մը, որ կ'իրականանայ եւ ՀԿԻ եւ ՄԱԿի Մանկական Հիմնադրամի մասնակցութեամբ:

